

ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ (V ԴԱՐ)

ԷԻ. Ս. ՄԿՐՏՁՅԱՆ

Համաձայնությունը շարահյուսական գլխավոր կարգերից է, որը գործառում է նախագա-
տության գլխավոր անդամների՝ միջուկների, ինչպես նաև գոյականական լրացումների ոլորտ-
ներում: Ենթակայի և ստորոգյալի փոխկապակցությունը թելադրում է նաև նրանց համաձայ-
նության ուսումնասիրություն: Գրաբարում, աշխարհաբարի համեմատությամբ¹, ենթակայի և
ստորոգյալի համաձայնությունը բազմազանություն է դրսևորում, որը բացատրվում է խոսքի
առանձնահատկությամբ, անեզականների, անհոգնականների, հավաքականների, բազմապիսի
բացառությունների առկայությամբ:

Գրաբարի ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը հայ քերականագիտության մեջ
ըստ ամենայնի ուսումնասիրված է²: Ուրեմն մնում է հենվել եղած բնութագրումների վրա,
օգտագործել ուսումնասիրված նյութը և լրացումներով ու լրացուցիչ առաջարկ-մեթոդով կամ
նախընտրելի եղանակով կատարվող աշխատանքը երկու տեսակ է՝ ա) ավանդականի գործադրում

և բ) նոր՝ կապված նախադասության կառուցվածքի հետ:

ա) Ավանդաբար փոխանցվող ֆենանդանակը, որ տարբեր քերականների և ուսումնասի-
րողների կողմից տարբեր ծավալներ է ընդգրկում, հարգի է և համարյա հարյուրամյակների
պատմություն ունի: Անցյալի քերականներից մինչև մեր օրերի հոդվածագիրներն ու ատենա-
խոսները այս կամ այն չափով ներկայացնում են ենթակայի և ստորոգյալի թվային և դիմա-
յին համաձայնություններն ու անհամաձայնությունները, շեղումներն ու բացառությունները՝
դրանք հաստատելով քննադատյին համապատասխան օրինակներով³:

Այսպես՝ ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը ավանդական եղանակով:

1. Եզակի ենթական պահանջում է եզակի ստորոգյալ, հոգնակի ենթական՝ հոգնակի ստո-
րոգյալ:

Օրինակ՝ Ուստի Ումիդը վերագոյն է քան զհայրն և հօր և իմաստուն. զի մինչդեռ յո-
րովայնի էր՝ զխորհուրդ զօրն գիտաց. և ելևալ յորովայն է անտի՝ կարող եղև զերկինս և զեր-
կիր առնել, զոր հայրն ոչ կարաց առնել (Եզե., 108). հօր և իմաստուն ստորոգելիների է
հանգույցը գեղչված է: Զայնը զփորձ ոչ միայն քրիստոնեայք, այլ և հեթանոսք և մոզք գիտնն
(անգ., 72): Այլ և վիշապք, ասեն, և նճանգ կեղծս ի կեղծս լինին (անդ., 82): Եւ էր Զաւէնս
այս անուանի զաւազ Աղբիանոս եպիսկոպոսի ի գեղչէ Մանաւազկերտոյ. էր սա բարոյիւք այր
չարաչար խիստ և նախանձոտ (Բ., 400):

Շեղում

ա) Եզակի թվով ենթական ստանում է հոգնակի թվով ստորոգյալ: Բոլոր դեպքերում, հա-
վանաբար, ենթակայի պաշտոնով բառին վերագրվում է հավաքականության իմաստ, այլապես
դա կդիտվեր սխալ գործածություն կամ թյուրիմացություն: Այդպիսի բառերից են հեր (մազ)
և հաղորձիկ բառերը, որոնք ստանում են հոգնակի ստորոգյալներ:

Օրինակ՝ Հեր գլխոյն ալևորեալ էին (անդ., 268)⁴: Իսկ հաղորձիկն որ զնոքօք արկեալ՝

¹ Տե՛ս Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. Ա, Եր., 1958, էջ 183—221:
² Հատկապես նկատի ունենք Ա. Զեյթունյանի «Ենթակայի և ստորոգյալի համաձայնու-
թյունը գրաբարում» (Եր., 1965) և Գ. Ներսիսյանի «Գոյականի թվի կարգը գրաբարում» (Եր.,
1987) թեկն. ատենախոսությունները:
³ Այլ հեղինակներից օգտագործված օրինակները նշում ենք հղումներով՝ անհրաժեշտու-
թյան դեպքում կատարելով կրճատումներ:
⁴ Հմմտ. Ա. Զեյթունյան, նշվ. ատեն. սեղավգիրը (ռուս.), Եր., 1965, էջ 7. Գ. Ներսիս-
յան, նշվ. ատեն., էջ 100:

այն ցեցակեր մեցոտեալ փրբաւ եղծեալ մաշեալ կորուսեալ ապականին (Ազ., 288)⁵;

բ) Հոգնակի թվով ենթական ստանում է կզակի թվով ստորոգյալ. դա բացատրվում է բառիմաստի փոփոխութամբ կամ զբարբարում տարածված ինչ-որ ոճի առանձնահատկութամբ: Օրինակ՝ գոյր արեգական ականջի. մեծ եղև փորձութիւնք նկուրթեան վտանգի (փորձութիւնք վտանգի սեռականով ավելագրութեան՝ վտանգի եզակի թվով բաղադրիչ ազդեցութամբ ստորոգյալը դրվել է կզակի թվով):

գ) Եզակի թվով ենթական հոգնակի թվով ստորոգյալ է ունենում, եթե ենթակայով բաակապակցութիւնը ազգակցութիւն է նշանակում:

Օրինակ՝ աբիւն ընդ արիւնս խառնիւն:

դ) Եզակի թվով ենթական հոգնակի թվով ստորոգյալ է ունենում, եթե հանգույցը համաձայնում է վերագրին:

Օրինակ՝ մտաց բարբառանք են աղանգն: Այլ թէ ի կալս ջորիք և ուղտք երևիցին՝ դիւաց կեբպարանք են այն (Եզն., 86): Տեսանե՞ս դի ամենայն ինչ, որ ի նոցանէ ասի, առասպելք են և սնտոի պատմութիւնք (անդ, 114): Ամենայն ինչ մտացոնք են. միս ոտել ոչ են մեղք. մտացոնք եղեն նմա գալուսա որդոյն Աստուծոյ. սյունկալիսին մեղք չեն. Քանզի այն իսկ կամք էին անօրինին. Եւ ոչ թէ իւր այն կամք Լին (Ներս., 117):

ե) Ար հարաբերակաւն դերանվամբ արտահայտված ենթական ունենում է հոգնակի թվով ստորոգյալ⁶:

Օրինակ՝ Եւ բազում անդամ մարտնչիւր ընդ այնոսիկ՝ որ ոչ ընդ նոյին օրինօք մտանլին (Ե., 12): Եւ այնմ աւուր եօթանս որ մկրտեցան յարքունական բանակէ անտի՝ ընդ այր և ընդ կին և ընդ մանուկ ավելի քան զորեքարիւր բիւր (Ազ., 464):

զ) Ք հոգնակերտ մասնիկի իմաստի մթաղեման պատճառով մի շարք բառեր, իրրև ենթակա, հոգնակի ձևերով ունենում են կզակի թվով ստորոգյալ:

Օրինակ՝ գործք սկսաւ երևել. կայեանք էր ի գաւառն Տարսուոյ. վարդապետութիւնք լսելի լինէր ի միջի մերում. ոչ զայր նոցա խախտմոք առանձինն, և ոչ ճացարար որոշեալ. նշանք յաջողեալ լինէր. սերմանիք երկրք ձեզ լիցի ի կերակուր. պատուիրանս այս ոչ ծանաբեռն ինչ է և ոչ ճեռի ի քէն. եղիցի լի վարձ՞ քո: Այս կեանքս պատերազմ է. նովա կեանք էր, և կեանքն էր լոյս մարդկան. է կամք քո և բանդ և բարեբարութիւնդ⁷:

Այսպիսի անեզականներէ ք հոգնակերտը քերականական իմաստափոխութեան էր ենթարկվում, — նկատում է Գ. Ներսիսյանը՝ ավելացնելով. «Դրանց ք հոգնակերտն արդեն չէր ըմբռնվում, և բառի բաղադրիչները հանդես էին գալիս որպէս մեկ միասնական ամբողջութիւն՝ եզակի իմաստով»⁸:

2. Անեզական անունները՝ (անարգանք, արքունիք, արգասիք, աւետիք, բարք, բաղձանք, բարիք, բառնալիք, գարշանք, գնացք, գաղտնիք, գիղղեղանք, դէպք, կլանելիք, երախտիք, զորոցք, լուացք, խնդրանք, կեանք, կտոք, կուռք, կարծիք, հմայք, միտք, մուտք, յիշելիք, շնորհք, պահք, պարտք, պիտոյք, պարտիք, վարք, ունելիք, ուտելիք, ըմպելիք, սաք, անէծք, նախատիք, գահոյք, Վիրք, Պարք, Յոյնք և այլն) ստանում են հոգնակի թվով ստորոգյալ:

Օրինակ՝ Ամենայն բարութեանց աղբիւր են կամք նորա. կամք Լաստուծոյ կառարեսցին. որ են կամք ծնողի իւրոյ. զի՞նչ իցեն կամք Հօր. անձեռիտան քաղան կամքն (22, 4-րդ (1), 739), կեանք մտցեն յաշխարհ. կեանքն յայտնեցան. կեանքն էին լոյս մարդկան. կեանք Յիսուսի յայտնի լինին (անդ, 759): Ամենայն կուտ հեթանոսաց ոչինչ են (անդ, 778): Ոչ կարծիք սրտի կարեն հասանել (անդ, 756): Հիմնեցեալ էին մեղքն յերկրի. որով մեղքն այրեսցին. մեղքն ի սղորան մտին յաշխարհ. վառեալ էին մեղքն. բորբոքեալ մեղքն ի նմանութիւն

⁵ Հմմտ. Գ. Ներսիսյան, *անդ (նկատենք, որ մեցոտեալ բառը սպորդումով դարձել է մերցոտեալ. արմատն է մեց կամ մէց՝ ցեց, որդ, ճճի (տե՛ս «Առձևն բառարան Հայկազեան լեզուի», էջ 518))*:

⁶ Հմմտ. Ա. Ալեքսանյան, *անդ, էջ 3*:

⁷ Անդ:

⁸ Հմմտ. Ստ. Մալխասեանց, *Գրաբարի համաձայնութիւնը, Քիֆլիս, 1892, էջ 135—136. Գ. Ներսիսյան, նշվ. ատեն., էջ 146—147*:

⁹ Հմմտ. Ս. Ղազարյան, *Հայոց գրական լեզվի պատմութիւն, Եր., 1961, էջ 482 (զիրք խրատէ. արգասիք նմանեցաւ. կեանք մերձեցաւ. անէծք այրեսցէ. խելք ոստեցաւ և այլն)*:

¹⁰ Գ. Ներսիսյան, *նշվ. ատեն., էջ 103—104*:

¹¹ Տե՛ս 2. Անաղյան, *Լիակատար քերականութիւն Հայոց լեզվի, հ. 3, Եր., 1967, էջ 856—857, Ս. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 479, Մ. Ասատրյան, Անեզական բառերը հայերենում (ստամբուլական հանդես), Եր., 1960, համ. 3, էջ 125—129), 2. Պետրոսյան, Գոյականի թվի կարգը հայերենում, Եր., 1972, էջ 53—63, Գ. Ներսիսյան, Գրաբարի անեզական և հազաքական գոյականները (սՀայոց լեզու և գրականութիւն), դիտ. աշխ. միջբրտնական ժողովուրդ, Եր., 1983, համ. 1—2, էջ 279—290), Ա. Ալեքսանյան, նշվ. ատեն. սեղմագիրը (ռուս.), Եր., 1965, էջ 9*:

էրոյ տոչորեցան [անդ, 4-րդ (2), 122]: Միտք մարդկան ունին զնմանութիւն և զօրինակս տե-
րեացն և ծաղկանցն (անդ, 151): Վաղվաղակի եղևն թեզ արդիւնք [անդ, 4-րդ (1), 178]: Փառքն
յումեթէ՞ ազաղեալ էին նմա. յումեթէ պարգևեալ էին նմա փառքն. ուստի ի նա հասին փառքն.
ի յաշողութենէ ուրուք անուանին փառք (անդ, 1-ին, 821):

Արևելք և արևմուտք բառերը, աշխարհագրական ըմբռնումից զատ, եթե նշանակում են
արևելյան կամ արևմտյան կողմում ապրող քնակիրներ կամ ժողովուրդ, ստանում են հոգնակի
ստորոգյալ: Օրինակ՝ Արևելք և արևմուտք գիտացին. արևմուտք ևս մեծապէս շարժեցան.
Արևմուտք յարեալս ընթացեալք հասին:

3. Հավաքական անունները¹², որոնք ըստ ձևի երկու խմբի են բաժանվում՝ բուն հավա-
քականներ՝ ազգ, ժողովուրդ, ամբոխ, բազմութիւն, գունդ, բանակ, զօր(ք), լէգէոն, տոհմ,
ցեղ, տուն, եկեղեցի, ծերակոյտ, աշխարհ, միջնաշխարհ, երկիր և այլն, և ածանցված հա-
վաքականներ՝ աւագանի, աղքատանի, երիցանի, վանեար, որևար, վարժեար, մանկտի, նա-
րարարան, ոսկեղէն, մսեղէն և այլն, ստանում են հոգնակի թվով ստորոգյալ, թեև սովորա-
կանը եզակի թվով գործածությունն է:

Օրինակ՝ Տիրեցին աշխարհիս Հայոց ազգն Սասանայ պարսկի (Ե., 12): Ազգ էին ընտիր.
սատակեցան <...> ընդ ամենեթեան առ հասարակ ազգն [անդ, 4-րդ (1), 3]: Յանցաւոր
իցեն պիղծ ազգն արշակունեաց. բազում ազգ են թռչոց, որ ոչ ձեռնին յղովթեարք. ժողո-
վուրդն ամենայն կայսեալ կային զնմանէ. ամենայն բազմութիւն ժողովրդեանն կային յազօրս:
Վաղվաղակի ածեալ լինէին բազմութիւն յառնադաննից գործատորացն [անդ, 7-րդ (1), 332]:
Իսկ ամբոխն տեսեալ զայսպիսի ահագին գործ քաջութեան՝ փախսեալ իւրաքանչիւր զէպ երե-
սաց իրեանց (անդ, 44): Զօրն դարանակալ յանկարծօրէն ի վերայ հասեալք ըմբռնէին.
կատուեալ լինէին զօրքն Պարսից ի զօրացն Յունաց. ապա զնոսա հարկանէին սատակէին
զօրքն Հայոց. իսկ զօրքն աղաղակիին առ հասարակ. ապա տապալ սկսան զօրքն Հայոց
[անդ, 3-րդ (1), 515]:

Աշխարհ և երկիր բառերը, մարդկային խմբերի, բնակչության իմաստով գործածվելով,
ստանում են հոգնակի թվով ստորոգյալ: Օրինակ՝ կարգեցան կազմեցան յօրինեցան խաղա-
ղացան աշխարհն Հայոց. Աշխարհ մի ապստամբ զինչ պատգամ յղեն. Միջնաշխարհն մեա-
ցեալք յերկուացան յարբայէն. ամենայն երկիրն սրտիւք իրեանց կանխէին. ամենայն երկիր
սկսան ի նա նայել. երկիր առ հասարակ լան և վայնն զրկութեանցն զյափշտակութեանցն
(Ներս., 106):

Հավաքական անունների եզակի ձևերի հետ հոգնակի թվով ստորոգյալի գործածությունը
կապվում է բակառուքյան հետ, որը նկատել են անցյալի քերականները: Նրանց կարծիքով,
բակառուքյունը քերականական ձև է, որը ենթադրում է համաձայնություն իմաստով և ոչ թե
քերականորեն, «որ է ըստ խօսողին կամ խօսքին մտաց համաձայնութիւն և ոչ ըստ քերա-
կանական օրինաց» (Զալ., 461): Բակառուքյունը զեզոտին սովորութենէն խտորում է, ինչ-
պես արտուղութիւնը, սակայն այն «կարդացողն ինքնին կարգատրեցու կամ ուղղելու է, այլ
ոչ հետևելու» (անդ, 465): Ա. Բազրատունին ևս բակառուքյունը համարում է ձևական ան-
համաձայնություն երկու խոսքի մասերի, բառերի միջև, միաժամանակ համաձայնություն՝ ի-
մաստով. «Բակառուքիւն է ձև, որով մասն ինչ բանի ի վերին երեսս անհամաձայն դնի յիմիք
ըստ ճիշդ օրինաց, սակայն գոյ անդ գաղտնի և մտաւոր համաձայնութիւն ըստ այլում կա-
նոնի ըստ զօրութեան ակնարկելոյ բանին»¹³: Այս քերականների ըմբռնումով բակառուքյունը
բազմապիսի դրսևորումներ ունի, նրանցից մեկը, ահա, եզակի ենթակայով հոգնակի ստորոգ-
յալի գործածությունն է: Բազրատունին բերում է և այսպիսի օրինակներ՝ Կօրածողով լինին
աւրայն ստորոց և իւրայնեացուց. Բերան անզգամաց պատմեն զարբիս. Խորհուրդ մահա-
նացուց զանգիտօղբ են: Ի բերանոյ նորա ելանեն հրաման մահու և կենաց. Պապանծեալ
լիցին բերան հայհոյող մարդուն. Մտաց բարբառանք են աղանդն, և ոչ ճշմարտութիւն¹⁴ (ընդ-
գծումը մերն է — է. Մ.):»:

Ուրեմն՝ բակառուքյունը գրաբարին խորթ երևույթ չէ, որի համար էլ առանձին կետով
ներկայացրինք եզակի թիվ ունեցող հավաքականները, որոնք հոգնակի ստորոգյալ են ստա-
նում:

4. Խրաքանչիւր բառը առանձին կամ ոմ, այլ, զգի բառերի հետ ստանում է ոչ միայն
եզակի, այլև հոգնակի թվով ստորոգյալ: Օրինակ՝ դառնացեալք էին իւրաքանչիւր ի վերայ
ծառայից իրեանց և յանցաւորաց [ՀՀ, 7-րդ (1), 842]: Օրին էր մեզ աստանօր զկարծիս

¹² Տե՛ս Հ. Ահադյան, նշվ. աշխ., էջ 529—531, Ս. Ղազարյան, նշվ. աշխ., էջք 479, 482,
Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևաբանական, Եր., 1976, էջ 21, Ա. Այնթուրյան, նշվ. ատեն. սեղ-
մագիրը (ռու.), էջ 14, Գ. Ներսիսյան, նշվ. հոդվածը, էջ 290—293 և նշվ. ատեն. սեղմա-
գիրը (ռու.), էջ 104—106:

¹³ Տե՛ս Ա. Բազրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852,
էջ 482:

¹⁴ Անդ, էջ 482—483:

նոցա յայտնել ըստ կարողութեան, թէ զինչ իւրաքանչիւր ո՛ր ի նոցանէ զօրծեաց (անդ, 843): Գնացին աչ իւրաքանչիւր ի տեղի իւր (Բագ., 255): Գնացին իւրաքանչիւր ի ժառանգութիւնս Խորհանց. իւրաքանչիւր զօր յօժարեցին ի սէր. Որպիսի ոք իւրաքանչիւր ո՛ր ի սրբոցն էին (անդ):

Ո՛ր ժխտական կառուցվածքում ստանում է նաև հոգնակի թվով ստորոգյալ: Օրինակ՝ Ոչ ո՛ր ի նոցանէն հաւանեցան. Եւ ոչ մի ո՛ր յանձն առնուին. Ոչ բնաւ ամենեին ի սրբոցն, նա և ոչ յերկնային զօրացն ո՛ր կարէին զմարդիկ արդարացուցանել (անդ):

Ո գերանունը ևս կարող է ունենալ հոգնակի ստորոգյալ՝ Ո քան զո հարուստ իցեն (անդ): Ամենայն գերանունը առանձին կամ եզակի թվով այլ բառերի հետ կարող է ունենալ հոգնակի թվով ստորոգյալ, թեև տարածված է եզակի թվով ստորոգյալի կիրառութիւնը:

Օրինակ՝ Այս ամենայն յայտնի են քիչ յերգս վիպասանացն [22, 7-րդ (1), 46]: Եւ ամենայն երկիր սկսան ի նա նայել [22, 3-րդ (1), 24]: Ամենայն մարդ պատուէին զսուրբն Բարսիլիոս (անդ): Գոհանային ամենայն բազմութիւն ժողովոյն (անդ): Ապա յետ այսորիկ արձակեցան ամենայն (անդ): Վասն այսորիկ ամենայն մարդ հառաչելով վայէլին (անդ): Եւ աչ ամենայն զօրացն Հայոց խաղային (անդ): Ամենայն նախարարութիւն Աղձնեաց ապրտամբեցին յարբայէն Հայոց Արշակայ (անդ):

5. Բազմակի ենթակաները, անկախ եզակի կամ հոգնակի թվով լինելուց, ստանում են հոգնակի թվով ստորոգյալ:

Օրինակ՝ Ապա զնային հասանելին ի մի վայր ամենայն զօրէն Հայաստան երկրին և Վասակ զօրավարն սպարապետն (Բ., 244): Եւ զօրն և տունն ապստամբեցին յարբայէն Հայոց Արշակայ և շոգան կացին առաջի արքային Պարսից. զնացին Սամուէլ և Դաւիթ և նստան ի նաւաթ Հոռմայ. նախ եղեն երկիրն և երկիր (Ներս., 107):

Բազմակի ենթակաները ստանում են եզակի թվով ստորոգյալ, որովհետև ստորոգյալը ենթականերից որին մոտ է՝ նախադաս թե հետադաս, նրա հետ է համաձայնում¹⁵: Օրինակ՝ Փայտ, խոտ, և եղէգն վաղվաղակի ապուկանի ի հրոյ (Չալ., 211): Որպէս խառնակեալ իցէ պղինձ և երկաթ և անգազ և կապար և արծաթ ի հալոցի (Բագ., 256): Եմաւտ Նոյ, Սէմ, Քամ, Յաքեթ՝ որդիք Նոյի, և կին Նոյի և երեք կանայք որդոց նորա ընդ նմա ի տապան անդր (Մեն., է, 13)¹⁶: Սպանաւ Շաւարշ և Մանուէլ որդի Պարգեայ և բազում ընդ նոսա (Բագ., 257)¹⁷:

Բազմակի ենթակաները եթե հոմանիշ բառեր են, ապա նրանց ստորոգյալը դրվում է եզակի թվով:

Օրինակ՝ Քանզի յոյժ սիրելի էր նմա խոովութիւն և արիւննեղութիւն, վասն այնորիկ յանձրն իւր տարաբերեր, եթէ յո՞ թափնցից զդառնութիւն թիւնաւոր/թիւնից (Ե., 14): Ամպ և մէզ շուրջ է զնովաւ. Յօրանելն և ձգտել ոչ ի դիւէ լինի (Բագ., 256)¹⁸: Փուշ և տասասկ բուսցի (Բ., 408): Ասէ այրն. ի մարմինդ քո փուշ և տատասկ բուսցի, փոխանակ զի տարապարտուց անհիձանես զմեզ (անդ):

Բազմակի ենթակաները հոմանիշ բառեր չեն և ունենում են եզակի թվով ստորոգյալ, որովհետև ստորոգյալին կից կամ մոտ համարվող ենթական, ասես, ընդգծվում, շեշտվում է, ու ստորոգյալը համաձայնում է նրան:

Օրինակ՝ Խաղաղութիւն և շինութիւն, մարդաշատութիւն և առողջութիւն, պտղաբերութիւն և ստացուածաշատութիւն և շանկանութիւն և մեծն աստուածասէր պաշտօն ի հաճոյակատարն բարութիւն յամա յաւուրս սոցա անել բազմացաւ (Բ., 14): Ապա ուրեմն ամենեցուն մեզ յայտոցի է թազաւորացն մերոց և այլոց առաջնոցն առ ի յիմաստն տխմարութիւն, և անկատարութիւն որոյն բանականի (Խ., 12): Զի՞նչ մեր բանս առ Աստուծոյ յաղագս ի ձէնջ վտանգիցս, որոց վտանգ է աղևտութիւն սեպհական է (Խ., 302): Եթէ իցէ ծնունդ և որդի ի բնութենէ Հօր աստուծոյ [22, 3-րդ (1), 428]: Անդ էր ուրախութիւն և տեսիլ. Սուտ հանութիւնք և ընդունայն զեղ կնոջ ոչ գոյ ի թեզ (Բագ., 237)¹⁹:

Բազմակի ենթակաները, որոնք ուղեկցվում են կրկնվող «ոչ» ժխտական շղկապով, ստանում են եզակի ստորոգյալ, հաճանաբար, ենթակաների՝ շղկապով առանձնանալու պատճառով, որով պայման է ստեղծվում առանձնացած ենթակայի և ստորոգյալի համաձայնութիւն համար: Բնականաբար այստեղ բառերի շարադասութիւնն էլ նպաստավոր միջոց է, ինչպես նկատել են քերականները (Մ. Տեր-Հարութիւնյան²⁰, Գ. Ավետիսեան²¹ և այլք):

¹⁵ Ս. Ղազարյանը դա բացատրում է ենթակաների իմաստների մոտիկութիւնը կամ հիմնական, առաջնային լինելու հանգամանքով (նշվ. աշխ., էջ 481):

^{16, 17, 18, 19} Այս օրինակները Ս. Ղազարյանին են (տե՛ս «Հայոց գրական լեզվի պատմութիւն», էջ 477—505):

²⁰ Մ. Տէր Յարութիւնեան, Քերականութիւն, Կոստանդնուպոլիս, 1808, էջ 149, տե՛ս Գ. Ներսիսյան, Գոյականի հետ այլ խոսքի մասերի համաձայնութիւնը, էջ 152:

²¹ Գ. Աւետիսեան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815, էջ 476:

Օրինակ՝ Եւ յայնմ կղզւոջ ոչ գտանէր ոչ ջուր ըմպելոյ և ոչ դոյզն ինչ արմատ (Ք., 144). առաջին ոչ-ը ժխտական մասնիկ է, մյուս երկուսը՝ շաղկապ: Այլ ո՛չ խորութիւն և ոչ բարձրութիւն, ոչ վիշտ և ոչ շարձարան, ո՛չ կապան և ոչ տանջանք, ոչ հուր և ո՛չ ջուր և ոչ սաւ, ո՛չ զբօսաւ և ոչ պատրանք, ո՛չ մեծութիւն և ոչ ազմատութիւն, ո՛չ այն աշխարհ և ոչ այս աշխարհ, ո՛չ կեանք և ոչ մահ: ոչ ու կարէ մեկնել զմեզ ի սիրոյն Քրիստոսի (Ագ., 102). առանձնացածը, ասես, նաև ամփոփողը ու-ն է, որին համաձայնում է ստորոգյալը: Քանզի հաստատուել եմ. եթէ ոչ մահ, և ոչ կեանք, և ոչ հրեշտակի, և ոչ իշխանութիւն, և ոչ որ կանս, և ոչ հանդերձակութիւն, և ոչ զօրութիւն և ոչ բարձրութիւն, և ոչ խառութիւն, և ոչ այլ ինչ արարած կարէ մեկնել զմեզ ի սիրոյ անտի. Զոր դուք գիտէք, որոց ոչ գոյ, ոչ սաւ և ոչ ծառայ, ոչ զանդ և ոչ տանուտերութիւն (Ներս., 109). ստորոգյալները համաձայնում են արարած և տան ենթականերին:

6. ենթակայի և ստորոգյալի համաձայնութիւնը բազմազան դրսևորումներ ունի ենթակա-բազադոյալ ստորոգյալ (ենթակա-վերադիր, ենթակա-հանգույց, վերադիր-հանգույց) հարա-բերութիւններում: Ուստի անհրաժեշտ է համակարգել դրանց համաձայնութիւնը:

ա) Լիարժեք համաձայնութիւն է տեղի ունենում ենթակայի և ստորոգյալի բազադիրչները միջև. անկախ ենթակայի հոգնակի կամ անեզական լինելուց և վերադիր խոսքիմասային ար-տահայտութիւնից՝ բոլորը դրվում են հոգնակի թվով:

Օրինակ՝ Յայտ է թէ շարին որք գործին՝ կամածինքն են և ոչ քնականք (Եզն., 50): Իւր կամքն միշտ բարեխառժէ, և կամի՛ զի և իւր բանաւոր արարածն ցանկացող բարեաց և գործօնեայ արդարութեան լինիցին (անդ, 138): Արդ զմարդկան իսկ շարեաց հարցցոք. ար-գասի՞մ անձանց իցեն, և եթէ անձինք ինչ շարիք (անդ, 30): Արդ եթէ այնք արարածք ինչ անձնատուք իցեն (անդ): Զի յորժամ շարին յայտ լինիցին՝ թէ շեն անձնատուք, անտի և հիւզն յանդիմանի (անդ, 28): Եւ քարին և նետի և տեզք արձակեալք լինինք և խոցոտեալ մերքն յապուշ դառնային (Ն., 350): Զոյգ երկուին յլիպացեալ էին (Ք., 194—196): Անձնատուք եզեն մարդիկ (Ն., 204): Տունկ գեղեցիկ իցեն և մեծամեծ իցեն: Եւ զառինքն ցայլ բզեն թուխք. Եւ ամենայն քշտաւորութիւն և պատահար շարին մասին արարածն են. զի որ շարք են, ոչ ըմբռնին. եկեղեցիք ոչ են պարզի թազաւորաց. Սրէնքն մեր պատճառք իցեն. այն խառիւք կարմիր էին ի գոյն արեան. այս սեանց խաչն հաւասար էին այն լուսեղն սեանք թակազաղի, զազաղն էին սպեղնէն. Եւ արք են թուով յոյժ սակաւ. Որոց շորեցունց պը-տաւք վտիտ էին և քառամք (Ներս., 112, 113):

բ) Բազմակի ենթակաները ևս ունենում են հոգնակի վերադիր: Օրինակ՝ Ցուցանէր՝ թէ հուրդ և օդ և երկիր կենդանիք ինչ իցեն և մեռանիցին (Եզն., 182):

գ) Լիարժեք համաձայնութիւնը մասամբ խախտվում է:

Ածական վերադիրը դրվում է եզակի թվով:

Օրինակ՝ Ուստի յայտ է՝ Եթէ երկինք ետեզակալ են, և լուսաւորքն զնայունք (անդ, 152): Ասեն, հակառակ են օրէնք որդարոյն՝ շնորհացն Յեսուայ (ՀՀ, 1-ին, 500): Դատաստանք տեառն նշմարիտ են. Եթէ կամին՝ և զեք բարի լինին, և եթէ կամին՝ և հրեշտակի շար լինին. սաւտ են և անմիտ մարդոց բարբաջմունք. Լատատարիմ են քեզ մարմնաւոր շարձարան նորա. Ամենայն բանք զոր ասացեր՝ նշմարիտ են (Ներս., 112):

Պայական վերադիրը ևս դրվում է եզակի թվով:

Օրինակ՝ Պատուիրանք տեառն լոյս են և լոյս տան աշուց. Վիրք առանձին թեթև ինչ աշ-խարհ են. վկայ են մեզ երկինք և երկիր, կէսն եպիսկոպոս էին յայլոց բազաթաց (անդ, 113):

Գերանուն վերադիրը ևս դրվում է եզակի թվով: Այդպես գործածվում են հատկապես ցու-ցական դերանունները:

Օրինակ՝ Այս են կամք շօր իմոյ, որ յերկինս է (Եզն., 138): Այս են կամք շօր իմոյ, զի զամենայն զոր ետ ցիս շայր (անդ): Զի քազումք այն են, որ <...> անկանել յօժարեն (Ագ., 8): Զի քազումք տեզիք այն են, որ իմ խաղաղութեամբ է հասեալ և քազումք այն են, որ մարտիւ պատերազմաւ արարի սապատակեալ (անդ, 118): Այս իցեն աներևոյթ արարածք Աստուծոյն իմոյ (անդ, 70): Աստուծոք այն են, զոր թազաւորն Պարսից պաշտէ. Նայն են մեր ամենեցուն կամք և բանք. դոյն են մեր կամք և խնդիրք (Ներս., 113—114):

Թվական վերադիրը նույնպես դրվում է եզակի թվով՝ շահչված անձեքական թվական-ները (երկոքին, երկոքեան, երեքին, երեքեան, չորեքին, չորեքեան և այլն), որոնք ընդհան-րապես հոգնակի թվով են գործածվում, ինչպես նաև երեք, չորք հոգնակի թվականները:

Օրինակ՝ Սիւն նոցա տասն, և խառիւք նոցա տասն. զօրատուք կարգեալք ի պատերազմ՝ երեսուն և վեց հազար. մատունք նորա վեց վեց. ամենայն կայք ոսկեղէնք և արծաթեղէնք՝ հինգ հազար և չորեք հարիւր. որդիք Փարսոսայ երկու հազար հարիւր երեսնասուն և երկու. որդիք Յեզամայ՝ հազար երկեքիւր յիսուն և չորս (անդ, 115), ստորոգյալներին հանգույցը զեղչ-ված է:

Թվականի առկայութիւնը ենթակայի և ստորոգյալի համաձայնութիւն մեզ այլ դրսևորում-ներ էլ ունի, որոնք ներկայացնում ենք ստորև:

7. Ծղակի թվով ենթական, որ ունի քանակական թվական որոշիչ (բացի մի թվականից), ստանում է հոգնակի ստորոգյալ:

Օրինակ՝ Յանկարծակի ի միում ժամու հարիւր այր, և ի միասում երկեբիւր, և էր՝ զի հինգ հարիւր այր մեռան ի բազմականին յորժամ բազմեալ կային (Ք., 264): Երկուսուսան այր կից զոյգ զկնի կողմանէ զմանէ բուռն հարկանէին, վեց այր ի մի բազուկն Մուշեղի, և վեց այր ի միւս բազուկն (Ք., 362): Ինչպես երևում է, այսպիսի կառույցների գերադաս բաղադրիչը այր բառն է, որը ընդհանրապես մարդ է նշանակում. հոգնակիության իմաստը ստորոգյալին է անցնում թվականներից:

Նմանատիպ կառույցներում եթե ենթական ուշադրության է առնվում, ընդգծվում է խոսքի սուբյեկտ լինելը, ստորոգյալը դրվում է եզակի թվով:

Օրինակ՝ Ծւ եւթն ասող միայն է զնայուն, և այլ ամենայն բեռեռեալ են յերկինս (Ծղն., 162): Հինգ ձագ երկուց դանգի վաճառի (Բաղ., 255):

Անձնեռական թվականները (երկոխին, երկոխեան...)՝²² և քանակականներից երկու(ք), երեք, չորս թվականները միայն հոգնակի հոլովում ունեն և, իբրև ենթակա, ստանում են հոգնակի թվով ստորոգյալ:

Օրինակ՝ Ձի կենդանիք ի մարմնաւորաց երկու ևեթ կան Ծնովք և Եղիա (Ծղն., 84): Նա և լլկանաց ևս շարին երկոխին պատեաւոք եղեն (ՀՀ, 1-ին, 271): Ձի ո՛ւր էր զի երկոխին աւրախ լինէին ի նմա (անդ): Այլ ի քէշին մի են երկոխեան (անդ, 270): Երկոխեան յամենայն կողմանց ամբացեալք՝ ողջ և անշարժ գտերութիւն մեր կայցում (անդ, 7-րդ (1), 579): Եղիցին երկուց ի մարմնի մի [անդ, 4-րդ (1), 382]: Լաւ են երկու քան զմի (Չալ., 212):

դ) Ենթակայի և բաղադրյալ ստորոգյալի փոխհարաբերության հարցում լիարժեք համաձայնությունը ամբողջովին խախտվում է, երբ հոգնակի ենթական ստանում է եզակի թվով ստորոգյալ՝ եզակի վերադրով և եզակի հանգուցով:

Օրինակ՝ Պատեաւոք շարեացն Եոյն է. և ոչ Արհմն (Ծղն., 96): Այս կեանքս պատեռազմ է (ՀՀ, 1-ին, 748):

Բազմակի ենթականերով եզակի բաղադրյալ ստորոգյալ՝ ձերութիւն և հիւանդութիւն պատեռազմ է ժամանակեայ (անդ):

Մինչ այժմ մեր ասածը վերաբերում է ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնությունը:

Ենթական և ստորոգյալը համաձայնում են նաև ղեմովով²⁵: Այսպիսի համաձայնությունը կարելի է երկու ձևով հասկանալ՝ 1. համաձայնություն ուղղական հոլովով ենթակայի առկայության պայմանում և 2. համաձայնություն թեք հոլովներով ենթակայի առկայության պայմանում: Քննենք առանձին-առանձին:

1. Համաձայնություն ուղղական հոլովով ենթակայի առկայության պայմանում.— Տարաքանակ ենթակաների (մենենթակա, բազմակի ենթակա) և տարատեսակ ստորոգյալների համաձայնությունը դեմքով բարդ պատկեր շուրի, եթե ենթական դրված է (կամ բազմակի ենթակաները դրված են) ուղղական հոլովով: Ստորոգյալի դիմային համաձայնություն խնդրում որոշ վիճակում կարևոր են դերանունների, հոգրի կիրառություններում դիմա-ցուցական իմաստավորման և բազմակի ենթակաների գործածությունները: Համաձայնության մի շարք դեպքեր ընդհանուր են հայերենի բոլոր շրջանների համար:

Ուստի գրաբարում էլ՝

ա) Գոյական կամ գոյականաբար առնված ենթական ունենում է 3-րդ դեմքի ստորոգյալ:

Օրինակ՝ Բոլոր մարմնոյս հոգի է կենդանութիւն, իսկ մարմնոյ և հոգւոյ միտք են կառավար: Քազաւոր ոչ զիրն միայն տացէ պարտիս, այլ և որոց եղև պատեաւոք ի կորուստ (Ծ., 30): Իսկ որք էին ի ներքս ի վանս սպարապետին՝ յոտն կացին միարան համբարծին զձայն իրեանց առ Աստուած և ասեն (անդ, 130): Ան մեծ անկար ի վերայ ամենեցուն (անդ, 132): Իսկ երանելիքն միարան քաջալերէին զնոսա և ասէին (անդ, 314):

բ) Դերանունները, բացի 1-ին և 2-րդ ղեմքերի անձնականներից, որոնք համապատասխանաբար 1-ին և 2-րդ ղեմքերի ստորոգյալներ են ունենում, նույնպես ունենում են 3-րդ ղեմքի ստորոգյալ:

Օրինակ՝ Ես եմ Աստուած, և շիք այլ ոք բաց յինէն, և ոչ զկնի այլ ոք յիցի Աստուած, Աստուած նախանձոտ եմ ես, ճատուցանեմ զմիզս հարց յորդիս մինչև յկթն դար (անդ, 112): Դուք էիք մեր ամուր պարիսպ ապաստանի (անդ): Իսկ մի ոմն ի նախարարացն որ անդր զիպեցաւ, էր ի նոցա խորհրդի, և ոչ միարանեաց ընդ նոսա, ի նոցունց ի տեղուցն քարկո-

²² Ամենեփին, ամենեփեան, բոլորեփին, բոլորեփեան որոշյալ դերանունները նույնպես ըստանում են հոգնակի ստորոգյալ:

²³ Տե՛ս Ա. Բագրատունի, նշվ. աշխ., էջք 247, 258—259, Ստ. Մայիսասեանց, նշվ. աշխ., էջ 33—36, Ս. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 483—487, Ա. Չիլքունյան, նշվ. ասոն. տեղմագիրը (ռուս.), էջ 7:

ծեցաւ (անդ, 132); Յայնժամ ամենեքեան ի նախանձ բարկութեան քրդեցան (անդ); Մինչ զեռ այս ամենայն լինէր (Բ., 222); Այլ զի Աստուծոյ գործ է այն (Եզն., 172); Եւ յերկինս իցէ ցայգ (անդ, 174); Քանզի ինքն երթեալ հեռացեալ յայլ կողմանս երկնիցն գտանի (անդ); գ) Բազմակի ենթակաների մեջ եթէ կան 1-ին և 2-րդ դեմքերով դերանուններ, ստորագ- յալը համաձայնում է առաջինի հետ, իսկ եթէ կան 2-րդ և 3-րդ դեմքերով դերանուններ, համաձայնում է երկրորդի հետ:

Օրինակ՝ Այլ ես և դու և ամենայն բազմութիւնը հանդերձ թագաւորաւ յայնպէս աշա- կերեսցում աստուածային գրոց (Ե., 73); Ես և դու նեծեալ էամ ի զոյգս (Բագ., 258); Ըն- դէ՞ր մեռանիք դուք և ժողովուրդ թո (անդ); Գալով գայցեմք ես և մայր թո և եղբարք թո, և երկիր պագանիցեմք թեզ (անդ); Մի գործեսցես ի նմա զամենայն գործ թո դու և ուսուց թո և դուստր էո, ծառայ թո, և աղախին թո, եզն թո և էջ թո և ամենայն անասուն թո (անդ, 259); Լուայք մեք և կանայք մեր և ուստերք մեր (անդ, 258);

դ) Երբեմն ստորագյալը համաձայնում է այն ենթակայի հետ, որն ավելի մոտ է:

Օրինակ՝ Վաղիւ դու և օրդիք թո ընդ թեզ անկցին (Բագ., 259); Զի մի մեռանիցին և նոքա և դոք (անդ); Դու և մեծամեծք թո, հարցք թո և կանայք ըմպէին (կամ ըմպէիք) նո- քօք զինի (անդ); Արա զկամս դորա. և կեաց դու և մեք (անդ):

2) Համաձայնությունը թեք հոլովներով ենթակայով կառույցներում.— Սա նշանակում է ենթակայի և ստորագյալի համաձայնությունը քննել՝ կապված նախադասության կառուցվածքի հետ: Ինչպես զրաբարի նախադասության կառուցվածքը առ այսօր հանգամանորեն չի ուսում- նասիրվել, այդպես էլ հանգամանորեն չի քննվել ենթակայի և ստորագյալի համաձայնությունը թեք հոլովներով ենթակայով կառուցում, որպես շարահյուսական-կառուցվածքային յուրա- հասուկ միավոր:

Գրաբարի քերականները սույն հարցում միայն առանձին, մասնակի բնութագրումներ են արել՝ կապված «աներևոյթ բայից» (=անորոշ դերբայի), անդեմ (Բագրատունի, Ավետիք- յան), դիմազուրկ (Սալլանթյան, Ավետիքյան, Մախախանյան), դիմազուրկ կամ միադիմի (Զա- լըխյան-Այտընյան), էական բայերի որոշ գործառույթների հետ²⁴: Նույնպիսի մոտեցում են ունեցել նաև մերօրյա ուսումնասիրողներն ու զրաբարի դասագրքերի, ուսումնական ձեռնարկ- ների, ուղեցուցիչների հեղինակները: Միայն Ս. Ղազարյանն է առաջին փորձը արել՝ ներկա- յացնելու սեռական, տրական հոլովներով ենթակայի և ստորագյալի համաձայնությունը²⁵: Եւ ճիշտ է նկատել. «Սեռական հոլովով արտահայտված ենթակայի և ստորագյալի համաձայ- նությունը կատարվում է վերահիշյալներից զգալի շարժով տարբեր կանոններով»²⁶: Սակայն մի երկու դիտողությամբ ներկայացնում է գլխավոր անդամների համաձայնությունը՝ հենվե- լով ստորագյալի տեսակների իր ըմբռնումների վրա: Այսպես՝ «Նոցա առաջնորդ կալեալ զՄե- րութանն» կապակցության մեջ, ըստ հեղինակի, զեղչված է օժանդակ բայը, «Եւ լուեալ ևս է իմ» կապակցության մեջ է հանգույց է²⁷. ուրեմն լուեալ է բաղադրյալ ստորագյալ է: Սրանց գրգռին, իհարկե, ճիշտ է նկատում, որ անորոշ դերբայով և լինիմ, ելանիմ բայերով կազմ- ված ստորագյալը, որ ունենում է տրական հոլովով ենթակա, որպես կանոն գրվում է եզակի երրորդ դեմքով²⁸: Այնուամենայնիվ, թերի համարելով իր արածը, մեծավաստակ լեզվաբանը երկրպագնում է. «Ենթական ու ստորագյալը զրաբարում ունեն համաձայնության մի շարք այլ կանոններ ու առանձնահատկություններ, որոնց մանրամասն նշումը մեր այս աշխատության նպատակներից դուրս է» (ընդգծ. մերն է— է. Մ.): Ուրեմն դասանք այդ կանոններին ու առանձնահատկություններին:

1. Որպես առանձնահատկություն, նշենք, որ դերբայական նախադասության մեջ բացառ- վում է ենթակայի և ստորագյալի համաձայնությունը: Անկախ նրանից, թե ենթական ո՞ր հո- լովով է կամ ո՞ր թվով, քանի որ ստորագյալը արտահայտված է անցյալ կամ անորոշ դեր- բայով, ապա համաձայնություն չի արձանագրվում հենց դերբայների անդեմ և անթիվ (առանց թվի կարգ ունենալու հատկանշի) լինելու պատճառով:

Օրինակ՝ Իսկ երանելոյն Սաճանոյ զեկեղեցական գրոց զումարութիւնն՝ կանխաւ յունա- կան բարբառոյն ի հայերէն դարձուցեալ, և բազում ևս զհայրապետաց սրբոց զճշմարիտ զի- մաստութիւնն (Կ., 31): Ասացեալ ի շօրէ առ խորհրդակալսն խորհրդակատարսն համազործան՝ լինել լոյս, և անդէն եղեալ լոյսն համասփիտ՝ խաւարակուլ օրաբեր (Ագ., 144): Զհետ եր-

²⁴ Տե՛ս Ա. Բագրատունի, նշվ. աշխ., էջք 182—183, 260—275, Գ. Աւետիքեան, նշվ. աշխ., էջք 98—100, 505—507, Մ. Սալլանթեան, Քերականութիւն <...>, Մոսկով, 1827, էջ 412—414, Վ. Զալըխեան, Քերականութիւն <...>, Վիեննա, 1885, էջք 118—120, 358—365 և այլուր, Ս. Մախախանյան, նշվ. աշխ., էջ 58:

²⁵ Տե՛ս Ս. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 484—487:

²⁶ Անդ, էջ 484:

²⁷ Տե՛ս անդ, էջ 486:

²⁸ Անդ, էջ 487:

թայք սիրոյ. և նախանձատր լինել ամենեցուն հոգևորացն (Կ., 7): Վասն որոյ ընդ այգանալ աշալըջաց սովորոպիւն ունել սպասատրացն արքունի՝ վէմս որձաթարեայս ունել ընդդէմ Երուանգայ (Խ., 198):

Օրինակներում կան ուղղական (լոյս, լոյսն), սեռական (Սաճակայ), տրական (ամենեցուն) հոլովներով բուն և սեռական հոլովով (աշալըջացն) կողմնակի ենթակայներ՝ եզակի և հոգնակի թվերով, որոնց ստորոգյալները արտահայտված են դերբայներով (զարձուցնալ, լինել, եղեալ, ունել, այգանալ՝ նախդավոր ձևով):

Եւ առաքելութն հաստատեցին՝ թէ պատել ձեզ յարնէ և ի հեղձուցելոյ և ի մեռելուտոյ և ի պոռնկութենէ (Եզն., 230), ձեզ տրական ենթակա է, պատել՝ ստորոգյալ (= դուք ձեռնպահաւ մնացե՛ք): Տեսնալ նախարարացն Հայոց, եթէ ոչ կացուցին Յոյնք ի վերայ նոցա թագաւոր, խորհեցան կամաւ հնազանդել թագաւորին խորովու (Խ., 390). նախարարացն սեռական հոլովով ենթակա է, տեսնալ՝ ստորոգյալ:

Այսպիսով, հիշյալ տիպի դերբայական նախադասութիւններում ենթակայի և ստորոգյալի համաձայնութիւն չի կայանում՝ անկախ ենթակայի բուն կամ կողմնակի, եզակի կամ հոգնակի, ուղիղ (ուղղական) կամ թեք հոլովներով լինելուց. սա է հիշյալ կառուցների համար ենթակայի և ստորոգյալի համաձայնութիւն վերաբերյալ միանշանակ եզրակացութիւնը:

Բանն այսպես է նաև հայցական հոլովով ենթակայի և նրա անորոշ դերբայ-ստորոգյալի (accusativus cum infinitivo) համաձայնութիւն վերաբերմամբ: Օրինակ՝ Ասի ժամանակս Արտաշէսի ոչ գտանել երկիր անգործ յաշխարհիս Հայոց (Խ., 224). ընդգծված ենթակայի և ստորոգյալի միջև ո՛չ դեմքով, ո՛չ թվով համաձայնութիւն չկա և չի կարող լինել:

2. Որպես երկրորդ առանձնահատկութիւն, նշենք, որ կիսանկախ դերբայական նախադասութեան սեռական ճորովով ենթակային դեմքով և բովով համաձայնում է իր հաջորդ՝ դիմավոր բայ-ստորոգյալը.— Այստեղ մի երկու պարզաբանում է անհրաժեշտ: Նախ՝ այս դեպքում դերբայական կապակցութիւնը դիտում ենք ոչ որպես անկախ, ինքնին մթավոր (նախորդ կետում անկախ միավոր է դիտվել), այլ՝ որպես ամբողջ նախադասութեան թաղադրիչ՝ շփման լուրջ եզրերով նրա դիմավոր ստորոգյալի հետ: Ապա՝ դեմքով համաձայնութիւնը պատկերացնենք այսպես. 1-ին, 2-րդ դեմքերի դերանուն ենթակայները ստանում են նույն դեմքերի ստորոգյալ, 3-րդ դեմքի դերանունը, գոյականը, գոյականաբար առնված թաղ՝ 3-րդ դեմքի ստորոգյալ, եզակի, բազմակի, անեզական և այլ ենթակայները՝ համապատասխան թրվով ստորոգյալ են:

Արդ՝ անհրաժեշտ չէ բուրբ նրբերանգների համար օրինակներ բերել, այլ՝ այնքան, որ առանձնահատկութիւնը հաստատվի: Այսպես՝ Իսկ նորա խափանեալ զպաշտօնն, ընթանայր ի խորանն արքունի (Բ., 186). այս նախադասութեան դերբայական կառուցը՝ նորա խափանեալ զպաշտօնն, առանձին վերցրած, նախադասութեան արժեք ունի, որի ներսում, ինչպես տեսանք, ենթակայի (նորա) և ստորոգյալի (խափանեալ) համաձայնութիւն չկա, իսկ շփման միջ դնելով դիմավոր ստորոգյալի (ընթանայր) հետ, պարզվում է, որ նորա սեռական ենթակային դեմքով (3-րդ) և թվով (եզակի) համաձայնում է ընթանայր ստորոգյալը: Նախադասութեան դերբայ-ստորոգյալը նորա ենթակայի առաջին՝ անդնմ ստորոգյալն է, որի պահանջով էլ ենթական դրվել է սեռական հոլովով, իսկ ընթանայր հաջորդ՝ դիմավոր ստորոգյալն է:

Այլ օրինակներ՝ Արդ մեր թողեալ զնոսա, հարցցուք զնոսա (Եզն., 96): Ուստի և աղանդացն առնալ նովին զանղաշեն (անդ, 162): Ապա թողեալ զնա Յեսուայն՝ յափշտակեաց առ Պաղոս (անդ, 202): Եւ տեսեալ տեսառն աշխարհի զստուածութիւնն Յեսուայ, զիտաց (անդ): Եւ ահա իշխանութիւն առնալ շարասէր սպասատրացն, զի զչորս զինուորսն ի բուն աւագացն մատուցեն ի փորձութիւն տանջանացն (Ե., 40): Այժմ քա տեսեալ զիս անձամբս փոթրիկ, ոչ առնր զշափ մեծութեան իմոյ (Բ., 260):

3. Իբրև երրորդ առանձնահատկութիւն, նշենք, որ «եմ» բայի եզակի երրորդ դեմքերը (է, էր, իցէ) համաձայնում են սեռական ճորովով այն ենթակային, որն արտահայտված է անձնական դերանվան եզակի 3-րդ դեմքով և եզակի բովով այլ դերանվամբ, գոյականով կամ գոյականաբար առնված ձևէ բառով.— Սեռական հոլովով ենթական բնութագրելիս նշվեց, որ անցյալ դերբայով և օժանդակ բայի երկային, անցյալ անկատարի և ստորադասական ապառնու (1-ին ապառնու) եզակի 3-րդ դեմքերով կազմված պարզ ստորոգյալը ունենում է սեռական ենթակա: Օրինակ՝ Լուեալ իցէ ձեր. Չպայն իմ աօք տեսեալ է. Մինչ շև մեղուցեալ ինչ ուրուք էր նմա (Չալ. 358): Քանզի էր Երուանդայ զարձուցեալ ի նա զգահն երկրորդական, զոր ճանեալ էր ի նոցանէ Տիգրանայ և տուեալ իւրում թեառանն Միհրդատայ (Խ., 200):

Կարծում ենք՝ այսպիսի համաձայնութիւնները պատահական զուգահիշակցութիւններ են և ոչ թե ներքին օրինաչափութեամբ հաստատվող համաձայնութիւն, կանոնարկված շարահյու-

սական գործառույթ: Յրինաչափականն այն է, որ հարակատար, գերակատար, ստորադասական բաղադրյալ պատճառի ժամանակվաների եզակի 3-րդ դեմքերով արտահայտված ստորոգյալն ունենում է սեռական հոլովով ենթակա: Իսկ որ որոշ իմքի ենթակաների համաձայնում են ստորոգյալները, ապա դա պատահականություն էր ուղեկցվող երևույթ է, ոչ թե օրինաչափություն: Ուստի այս կետը անվանում ենք համաձայնություն՝ ձևական, ակա վիճակից ելնելով: Ակառն հիշում ենք արդի հայերենի հատկացուցիչ-հատկացյալի համաձայնությունը (դպրոցի տօրենի նրամանի կատարման ընթացքը): Բայց կարող ենք ասել՝ արդի հայերենում հատկացուցիչը և հատկացյալը համաձայնում են՝ հիմք ընդունելով, ահա, այդպիսի պատահական համաձայնությունները: Ծիշտ այդպես է և սույն կետում նշված՝ ենթակայի և ստորոգյալի համաձայնության խնդիրը: Այնուամենայնիվ, ուսուցողական նպատակով թողնում ենք իբրև առանձնահատկություն՝ վկայելով մի քանի օրինակ ևս:

Անհնարին է ասել՝ եթէ հիւղայն լեալ իցէ (ՀՀ, 1-ին, 224): Այլ գոր միայն բողբալ է, միան առնու նովին Հոգւով (Ծգն., 156): Զի որ ինչ Մովսէսի չէ ասացեալ, այլ մարգարէք լցին նովին Հոգւով (անդ): Իսկ լուեա՞լ է ձեր՝ եթէ ո՞ր ասացեալ է ձեզ զայսպիսի մոլորութիւն (Ծ., 354): Եթէ արհեստահան որ իցէ, կամ վնաս ուրտօւ ումք արարեալ իցէ (Ք., 168): Զի այժմիկ ձեր ծառայից գմեր տերանց ձերոց գրած կայեալ է (անդ, 258): Եթէ էր սուր ի ձեռին իմում, արդ և խոցեալ էր իմ գթեզ (Բագ., 252): Մինչ չև եկեալ էր եօթն ամաց սովոյ (անդ): Եւ նոցա թէ չէր զմանուկն տեսեալ (անդ): Ահա մտացեալ իցէ մեր զամենայն նեղութիւնս (անդ):

4. Իբրև շորրորդ առանձնահատկություն, նկատենք, որ միադիմի բայերով և աճորդ դերբայով կազմված բաղադրյալ ստորոգյալը համաձայնում է առական հոլովով ենթակայի հետ, որն արտահայտված է 3-րդ դեմքի դերանվամբ, եզակի թվով գոյականով կամ գոյականաբար առնված բառով:

Այս համաձայնությունը ևս արտաքին, պատահական համաձայնություն է, քանի որ դա գլխավոր անդամներից ոչ մեկի պահանջով կամ թելադրանքով չի տեղի ունենում: Օրինաչափությունն այն է, որ նշված կառուցով ստորոգյալը պահանջում է տրական ենթակա: Իսկ որ այդ ենթական պարտադրաբար պետք է ընդունի այս կամ այն թիվը, դեմքը, կամ թե նրա պահանջով ստորոգյալի թիվը, դեմքը փոխվեն, նման երևույթ տեղի չի ունենում: Ստորոգյալի թիվը և դեմքը անփոփոխ են, իսկ ենթական՝ փոփոխական, ուստի հերթագայող ենթականերից նշվածները պատահականորեն համաձայնում են ստորոգյալին:

Այժմ բերենք տարբեր թվերով ու դեմքերով տրական հոլովով ենթականեր, որոնցով կորոշվի ենթակա-ստորոգյալի համաձայնության աստիճանը:

Պարտ է ապականութեան այսմիկ զգենուլ զանապականութիւն, և մանկանցուիս այսմիկ զգենուլ զանապականութիւն (Ծգն., 236): Ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի բեմին Քրիստոսի (անդ): Եւ ընչի իմք յուրնչէ չէ հնար գնալ (անդ, 154): Ինձ ասպետիս պարտ է զքեզ պսակել ըստ սովորական իշխանութեան իմոյ հայրենեաց (ՀՀ, 7-րդ (3), 337): Պարտ էր մեզ սակաւ ինչ անցանել բանիւ (անդ): Զի ոչ է մարք հովտի բողոյ գիաշն (անդ, 3-րդ (2), 472): Եւ ի գուր է կա՞լ կա՞լն ասել ումեք ի կալա՞ և ոչ առ առ (Ծգն., 84):

5. Հինգերորդ առանձնահատկությունը վերաբերում է դիմավոր ստորոգյալի և թե՛ հոլովներով երա ենթակայի թվային բացահայտ անհամաձայնությանը:

Ծզակի 3-րդ դեմքի ստորոգյալները՝ կազմված է, էր. իցէ բայաձևերով (օրինակ է, օրինակ էր, օրինակ իցէ) կամ միադիմի բայերով (պարտ է խօսել, մարք իցէ փախել թաքել), գործածվում են սեռական, տրական հոլովներով ենթակաների հետ, որոնք հոգնակի թիվ ունեն: Ընթակայի և ստորոգյալի բացահայտ անհամաձայնությունն ընդգծող այսպիսի կառույցները գրաբարին ընդող են և տարածված:

Օրինակ՝ Վասն զի տեսեալ էր ամենեցուն և լիով ի գրոց ճանաչէին (ՂՓ, 84): Զի եթէ հնար ինչ էր մարմնատուրաց զկերպարանս փոփոխել. նախ մարդ՝ որ առաւել քան զնոսա է՝ փոխէր զկերպարանս յինչ և կամէր (Ծգն., 84): Որոց դարձեալ զէպ լինէր եղբարս երկուս յաշակերտացն՝ յուլարկել ի կողմանս՝ Ասորոց (Կ., 30): Բայց մեզ մի լիցի այնպիսի ինչ ասել (Ծգն., 30): Իսկ լուեա՞լ է ձեր՝ եթէ ոչ ուսուցեալ է ձեզ զայսպիսի մոլորութիւն (Ծ., 354):

Նախադասության ընդհանուր կառուցվածքի մեջ թեք հոլովներով ենթակայով ենթակաուցյաները ենթակայի և ստորոգյալի համաձայնության գործառույթում առանձնահատկություններ են դրսևորում: Նախ՝ տեսանելի են այն հակադրությունները, որոնք առկա են ուղիղ և թեք հոլովներով ենթականերով կառույցներում, ապա՝ պակաս հետաքրքրություն չեն ներկայացնում թեք հոլովներով ենթակայով կառույցների ինքնատիպությունն ու առանձնահատկությունները, որոնցով էլ քաջատրվում են համաձայնության սահմանված դրսևորումները:

Այսպիսով, ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը քննվում է երկու պլանով՝ ա) ավանդաբար փոխանցվող քննաեղանակով և բ) նախադասության կառուցվածքի հաշվառումով:

Առաջին պլանով առանձնացվում են ուղղական հորովով ենթականերին՝ նրանց ստորոգյալներին համաձայնությունը դեմքով և թվով: Ներկայացվում են նաև աննշական, հավաքական անուններով արտահայտված և բազմակի ենթակաների հետ կապվող համաձայնության դրսևորումներն ու յուրահատկությունները: Թվային համաձայնության գործառույթում առանձնակի ուղղորություն է արժանանում բաղադրյալ ստորոգյալի արտահայտության հարցը՝ նրանում վերադրել՝ այս կամ այն խոսքի մասով արտահայտվելու թվային յուրահատկությամբ:

Երկրորդ պլանով համաձայնությունը քննվում է՝ կապված նախադասության կառուցվածքի հետ: Նշվում է, որ դերբայական նախադասություններում բացառվում է ենթակալի և ստորոգյալի համաձայնությունը: Կիսանկախ կառույցների³⁰ ենթական համաձայնում է իր համար երկրորդ ստորոգյալի՝ նախադասության (ոչ թե դերբայական կապակցության) ստորոգյալի հետ: Իսկ անցյալ դերբայով և օժանդակ բայի եզակի 3-րդ դեմքերով (է, էր, իցէ) կազմված, ինչպես նաև միադիմի բայի և անորոշ դերբայի հարադրությամբ հանդես եկող ստորոգյալի և նրանց սեռական, տրական ենթակաների միջև տեղի է ունենում զուգորդվող համաձայնություն, ոչ թե ներքին կապերից ու պահանջից առաջացած համաձայնություն: Այլ կերպ ասած՝ այսպիսի համաձայնությունը մեր կողմից բնութագրվում է իբրև նախադասության առանձնահատկություններից բխող շարահյուսական երևույթ:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ազ. — Ազաթանզեղոս, Հայոց պատմություն, Եր., 1983:

ատեն. — ատենախոսություն

Բ. — Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Եր., 1987:

Բազ. — Արսէն Բազրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852:

Ե. — Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Եր., 1989:

Եզն. — Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Եր., 1994:

Խ. — Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Եր., 1981:

Կ. — Կորին, Պատմութիւն վարուց և մահուան սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի, Թիֆլիզ, 1913:

ՀՀ — Հայկական համարարատ

Ներս. — Գ. Ներսիսյան, Գոյականի թվի կարգը գրաբարում (ատենախոսություն), Եր., 1987:

Չալ. — Վ. Չալչիսեան, Քերականութիւն հայկական լեզուի, հանդերձ փոփոխմամբ և յանուածոժք, աշխատասիրեալ ի Հ. Արսէնէ վ. Այտընեան, Վիննեա, 1885:

Э. С. МКРТЧЯН—Согласование подлежащего и сказуемого в грабаре (V в.).—
Согласование главных членов предложения в древнеармянском языке рассматривается в традиционном плане и по-новому, в аспекте структуры предложения. Так, сначала представлены согласования подлежащего, выраженного в именительном и косвенных падежах, со сказуемым в лице и числе, включая проявления и особенности согласования подлежащего, выраженного в plura'ia tantum, собирательным существительным, несколькими именами. Второй способ—характеристика согласования в плане строя предложения.

³⁰ Տե՛ս է. Ս. Մկրտչյան, Գերբայական կապակցության և դերբայական նախադասության փոխհարաբերությունը գրաբարում (ՀՄՄՀ ԳԱ «Երաբեր հասարակական գիտություններ», 1984, հ. 8)։